«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ *Երեխաների դաստիարակի մասնագիտական հմտություններն ու կարողությունները*

Հաստատություն՝ *<<Երևանի հ.144 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ*

Դաստիարակ՝ Աննա Հունանյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

Երեխաների դաստիարակի մասնագիտական հմտություններն ու կարողությունները

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ.....5

ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....5

ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ.....10

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցականն իր օրվա հիմնական մասն անցկացնում է մանկապարտեզում: Այս ժամանակահատվածը տարիքային զարգացման ամենաբարդ շրջանն է: Մանկապարտեզը սանի համար հասարակ վայր չէ, որտեղ նա ստանում է մի շարք գիտելիքներ,այլ մի վայր է, որտեղ երեխան յուրացնում է տարբեր սոցիալական դերեր, պատրաստվում հասուն կյանքի, որն իրականացվում է դաստիարակների շնորհիվ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ երեխաների դաստիարակության գործում մանկապարտեզը շատ մեծ նշանակություն ունի, քանի որ ընտանիքից հետո այն հաջորդ կարևոր սոցիալական նշանակություն ունեցող հաստատությունն է, որն ազդում է անձի ձևավորման վրա: Դաստիարակի գործունեության հիմնական նպատակը սաների համար այնպիսի միջավայրի ապահովումը պետք է լինի, որտեղ նրանք հնարավորություն կունենան ինքնաբացահայտվելու, զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները, ինչը կնպաստի նրանց՝ որպես անհատ կայացմանը և հետագայում հասարակության մեջ արդյունավետ ներառմանը:

Կրթական աշխատանքիարդյունավետությունը ուղղակիորեն կախված է նաև նրանից, թե որքանով է կայացած ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը: Այլ կերպ ասած, միայն դաստիարակների և ծնողների լիարժեք համագործակցությամբ է հնարավոր ձևավորել բարոյական բարձր արժեքներ ունեցող և սոցիալապես հասուն անհատականություն: Երեխայի դաստիարակության հարցը միշտ էլ եղել, կա ու կլինի արդիական ու խիստ կարևոր, դրա համար էլ չափազանց կարևոր է դաստիարակի դերը:

Մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները և մարդկային որակները արդի պայմաններում շատ են կարևորվում, քանի որ նրանք են դաստիարակում և զարգացնում մատաղ սերնդին:

Մանկավարժական գործունեությունը շատ բարդ և դժվարին է: Նրա գործունեությունը ներառում է աշխատանքի բոլոր ձևերը, ինչպես նաև անձնային բարոյական բոլոր հատկանիշների դրսևորումները:

Դաստիարակը պետք է ունենա բազմակողմանի զարգացվածություն, լայն մտահորիզոն և ցանկացած պահի, ինչպես հանրագիտակը, հանպատրաստից պատասխանի սաների հարցերին: Նա պետք է տիրապետի իր մասնագիտության յուրաքանչյուր տարրին, մանրամասներին:

Սաների հետ շփման գործում դաստիարակը պետք է օժտված լինի անձնային բարձր որակներով: Անհրաժեշտ է այնպիսի որակների համադրություն, ինչպիսիք են նպատակաուղղվծաությունը, վճռականությունը, աշխատասասիրությունը, դիտողականությունը: Հատուկ ընդգծվում է սրամտության, հռետորական, արտիստիկ ընդունակությունների կարևորությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել դաստիարակի դերը նախադպրոցականի անձի ձեվավորման գործընթացում:

Հետազոտության նպատակից առաջադրվում են հետևյալ **խնդիրները.**

1.Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ մասնագիտականգրականություն:

2.Ուսումնասիրելդաստիարակի մասնագիտության էությունը, նրա մասնագիտական և անձնային որակները:

3. Իրականացնել հետազոտական աշխատանք, սանի անձի զարգացման վրա դաստիարակի ազդեցության վերաբերյալ:

Հետազոտության մեթոդները: Կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- մանկավարժահոգեբանական գրականության վերլուծության,
- զրույցի,
- դիտման,
- սոցիոլոգիական հարցման,
- վիճակագրական տվյալների վերլուծության:

Աշխատանքը կազմված է ներածությունից, 2 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է համակարգչային 16 էջ:

ԳԼՈՒԽ 1. ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Դաստիարակի մասնագիտության բնույթը, ծագման պատմությունը

Դեռևս հնադարում հասարակության զարգացման որոշակի աստիճանում կարիք առաջացավ աճող սերնդին փոխանցել աշխատանքային կարողություններ և հմտություններ, ռազմական փորձ և նրան նախապատրաստել կյանքին: Այդ նպատակի համար առանձնացվեցին տեղի հմուտ մարդիկ, որոնց անվանեցին դաստիարակներ:

Այս առումով մանկավարժի մասնագիտության ծագումն ունի օբյեկտիվ հիմքեր: Հասարակությունը չէր կարող գոյություն ունենալ և զարգանալ, եթե աճող սերունդները, որոնք գալիս են փոխարինելու ավագներին, ստիպված լինեին ամեն ինչ նորից սկսել՝ առանց ժառանգություն ստացած այդ փորձի ստեղծագործաբար յուրացման» [Պոդլասի 2003:406]:

Մի շարք գիտությունների՝ աստղագիտության, բժշկագիտության, փիլիսոփայության, երկրաչափության, մաթեմատիկայի զարգացման, աշխատանքային և ռազմական փորձի փոխանցման հետ միաժամանակ դաստիարակները սկսեցին զբաղվել նաև այդ գիտությունների բնագավառի գիտելիքների փոխանցմամբ. գիտելիքը մարդկության համար դարձավ արժեք:

Դաստիարակի առաքելությունը դարձավ սանին դաստիարակելը, նրան գիտելիք տալը և քաղաքացիական-սոցիալական կյանքին նախապատրաստելը:

- Դաստիարակը պետք է ունենա բարձր աշխատունակություն, կարողանա դիմադրել բացասական ազդակներին, ուշադրությունը կենտրոնացնելու հմտություն ունենա, մշտապես լինի ակտիվ և առույգ, աշխատանքային ողջ օրվա ընթացքում կարողանա պահպանել կենսունակությունը, ունենա ուժերը արագ վերականգնելու ընդունակություն:
- Դաստիարակը զուսպ պիտի լինի, ցուցաբերի համբերություն, հավասարակշռություն, տարբերվի հստակ արտասանությամբ, մտքերի արտահայտիչ շարադրմամբ:
- Դաստիարակը պետք է ունենա բարձր աշխատունակություն, արագ վճիռներ կայացնելու կարողություն, կարողանա մի գործունեությունից արագ անցում կատարել մեկ այլ գործի, պատրաստ լինելու փորձարարության, արագ հարմարվել նոր միջավայրին, ունենալ շփումներ հաստատելու կարողություն, անծանոթ շրջապատում և անծանոթ մարդկանց հետ ազատ զգալու ընդունակություն:

Այսինքն, կարող ենք ասել, որ դաստիարակի աշխատանքը շատ բարդ և դժվարին գործընթաց է: Այդ բարդ ու դժվարին գործընթացն իր մեջ ներառում է տքնաջան աշխատանքի բոլոր ձևերը, ինչպես նաև նրա անձի բարոյական բոլոր հատկանիշների դրսևորումները:

Դաստիարակն իր բնույթով պետք է լինի կենսուրախ, շիտակ, ուղղամիտ, ճշմարտացի, արդարամիտ, ունենա մեղմ բնավորություն, իր սաների մեջ ձևավորի առողջ փոխհարաբերություններ:

Լավագույն դաստիարակը նա է, ում մասնագիտական գիտելիքներն ու բարոյական որակները մշտապես միասնության մեջ են: Բավական է այս որակներից մեկը բացակայի, դաստիարակը կզրկվի իր բարձր կոչման տերը լինելուց:

Դաստիարակի գործը մշտապես աճող մարդու կրթությունը, դաստիարակությունը և զարգացումն ապահովելն է:

Դաստիարակի մասնագիտությունն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցով էլ տարբերվում է մյուս մասնագիտություններից:

Առաջին առանձնահատկությունն այն է, որ դաստիարակն իր ունեցած գիտելիքները, կարողությունները, հմտությունները հաղորդում է սաներին:

Դաստիարակի երկրորդ առանձնահատկությունը նրա անսահման սերն ու նվիրվածությունն է իր սաներին: Նա իր սաներին է տալիս իր ամբողջ եռանդը, էներգիան, այն բոլոր արժեքները, որ կրում իր մեջ: Այս ամենի հետ մեկտեղ դաստիարակը տարեց - տարի պետք է համալրի իր գիտելիքների իմացության պաշարը, զարգացնի իր մտավոր ուժերը:

Դաստիարակի մասնագիտության **երրորդ** առանձնահատկությունն այն է, որ դաստիարակը ուսուցման և դաստիարակության համար պետք է որոնի ավելի արդյունավետ մեթոդներ, հնարներ և միջոցներ: Նա փորձում է դրանք այնպես կիրառել, որպեսզի սաների կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրներն ավելի արդյունավետ լուծում ստանան: Նշանակում է՝ լավագույն դաստիարակ է համարվում այն մանկավարժը, ով մշտապես որոնումների մեջ է և հանդես է գալիս կատարյալ հայտնագործողի դերում: **«Սովորիր, որ սովորեցնես»,** սա է կատարյալ մասնագետի ֆունկցիան:

Դաստիարակի **չորրորդ** առանձնահատկությունը նրա՝ հոգեբանական և անհատական առանձնահատկություններ ունեցող սաների հետ գործ ունենալն է: Դաստիարակը պետք է կարողանա իրեն դնել երեխայի տեղը, բոլոր իրավիճակներում դրսևորել համբերատարություն և զսպվածություն: Վ. Ա.

Սուխոմլիսկին գրում է. «...Դա ամենից առաջ այն մարդն է, որը սիրում է երեխաներին, բերկրանք է ապրում նրանց հետ շփվելիս, հավատում է, որ յուրաքանչյուր երեխա կարող է լավ մարդ դառնալ, կարողանում է բարեկամանալ երեխաների հետ, սրտին մոտ է ընդունում մանկան ուրախություններն ու դառնությունները, գիտի մանկան հոգին, երբեք չի մոռանում, որ ինքն էլ երեխա է եղել»[Սուխոմլինսկի 1980:33]:

Դաստիարակի **հինգերորդ** առանձնահատկությունը նրա անձի բարոյականությունն է: Դաստիարակն իր տեսակով պետք է լինի գերբարոյական կերպար: Իր սաների համար պետք է լինի անսասան իդեալ, շատ բարի, ազնիվ, գթասիրտ, համեստ, խղճով, պարզ բարեկիրթ, մի խոսքով պետք է օժտված լինի մարդկային բոլոր արժանիքներով:

Դաստիարակի մասնագիտության **վեցերորդ** առանձնահատկությունը հասարակության առջև նրա պատասխանատվությունն է՝ աճող սերնդին կրթելու, դաստիարակելու, զարգացնելու, երկրին կատարյալ մարդ տալու համար: Այստեղ տեղին է հիշատակել հին հունական փիլիսոփա Պլատոնի խոսքերը. «Վատ կոշկակարն այնքան վնաս չի բերում հասարակությանը, որչափ վատ մանկավարժը»:

Դաստիարակի մանկավարժական վարպետությունը պետք է արտահայտվի նրա գործունեության բոլոր բնագավառներում, ուսումնական նյութի հաղորդման ու ամրապնդման, հին դասանյութի հարցման և հարցերի միջոցով ամփոփման, սովորողներին տրվող առաջադրանքների, աշակերտներին արվող դիտողությունների, նրանց հետ հաղորդակցվելու ու շփվելու, իր շարժուձևի, դիմաշարժի ու ժեստիկուլյացիայի, հումորի ու կատակի, նիստ ու կացի, քայլքի, մանկապարտեզականներին ողջունելու մեջ և այլն:

Մանկավարժական վարպետությունը դաստիարակի՝ իր գործունեության բոլոր մեխանիզմներին տիրապետելու և դրանք կիրառելու ընդունակությունն է:

Ա. Բալյանը գրում է. «Մանկավարժական վարպետություն ասելով սովորաբար հասկացվում է այն մասնագիտական կարողությունների ու հմտությունների տիրապետումը, որը հիմնված է համապատասխան գիտելիքների հարուստ փորձի վրա և ապահովում է կատարելիք գործի հաջողությունն ու արդյունավետությունը»[Բալյան 1988:12]:

Մանկավարժական վարպետությունը, որպես հասկացություն ներառում է դաստիարակի մանկավարժական, հոգեբանական խորագիտությունը, մասնագիտական ընդունակությունները և մանկավարժական տեխնիկայի ուղղությամբ ունեցած կարողությունները:

Առաջին՝ խորապես ուսումնասիրել մանկավարժական վարպետությանը վերաբերվող մանկավարժական գիտության և հոգեբանության տեսական բոլոր հարցերը, դաստիարակի մանակավարժական տեխնիկան:

Երկրորդ՝ ուսումնասիրել մանկավարժական գործընթացի հիմունքներն ու օրինաչափությունները, նրա բոլոր մեխանիզմները, ապա գործնականում տիրապետել դրանց կիրառման արվեստին և կատարելագործել սեփական փորձը: Այդ ամենը դաստիարակին կօգնի ուսուցման և դաստիարակության գործընթացները իրականացնելիս յուրաքանչյուր հարցին մոտենալ մանկավարժորեն: Դա նշանակում է, որ դաստիարակը յուրաքանչյուր հարց, երևույթ, փաստ պետք է սինթեզի և իմաստավորի, իմանա դրանց ծագումաբանական պատճառները և լուծի հիմնախնդիրը:

Երրորդ պայմանը՝ դաստիարակի մանկավարժական վարպետություն ձեռք բերելու և յուրացրած գիտելիքների համադրումն է: Այդ գիտելիքները կարող են լինել մանկավարժական, հոգեբանական, փիլիսոփայական և ֆիզիոլոգիական:

Մակարենկոն ասում էր. «Դաստիարակել կարողանալը արվեստ է, այնպիսի արվեստ, ինչպես ջութակ կամ դաշնամուր նվագելը, լավ փականագործ կամ խառատ լինելը»:

Մանկավարժության վարպետության բաղկացուցիչ մասն է կազմում մանկավարժական տեխնիկան:

Մանկավարժական գործընթացում շատ կարևոր է դաստիարակի պատրաստվածության մակարդակը: Դաստիարակի - դաստիարակի պրոֆեսիոնալ մանկավարժական վարպետությունն իր մեջ ներառում է մանկավարժական տեխնիկան:

Մանկավարժական տեխնիկան այն գիտելիքների, կարողությունների և հմտությունների կոմպլեքսն է, որն անհրաժեշտ է մանկավարժին՝ պրակտիկայում արդյունավետ կիրառելու իր ընտրած մանկավարժական ներգործության մեթոդները:

Մանկավարժական տեխնիկայի մեջ կարելի է դասել դաստիարակի խոսքի կուլտուրան, այսինքն նրա առոգանությունը, կարգավորված ձայնը, շնչառության մշակումը, դիմաշարժի, ժեստիկուլյացիայի միացումը, ներդաշնակությունը խոսքին և այլն: Դաստիարակը պետք է կարողանա կազմակերպել, քայլել, կատակել, լինել ուրախ, բարկացած: Դաստիարակը իրեն պետք է պահի այնպես, որ նրա յուրաքանչյուր շարժումը դաստիարակչական բնույթ կրի**»[Բալյան 1988:7]**

ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Դաստիարակի աշխատանքը բոլոր ժամանակներում էլ եղել է հարգված ու պահանջված աշխատանք: Այն բժշկության հետ միասին հասել է մինչև մեր օրերը դարերի խորքից: Ոչինչ երբեք չի կարող փոխարինել դաստիարակին, նրա մանկավարժական վարպետությանը, կուլտուրային և իհարկե ամենակարևորին՝ հեղինակությանը: Մեր օրերում էականորեն փոխվել է դաստիարակի դերը հասարակության մեջ:

Պատմական այս փուլում գիտատեխնիկական զարգացման պայմաններում պիտի փոխվեն նաև կրթության ներկայացվող պահանջները: Կրթությունն իրականացնող սուբյեկտը՝ մանկավարժն իր կերպարով խիստ տարբեր է նախորդ դարերի դաստիարակներից: Այսօր փոխներգործուն ուսուցումը պահանջում է այլ որակի մասնագետ: Մանկավարժ, ով կարևորում է սանի մտածողության զարգացումը, փորձում է ավելի ակտիվ ուսուցում իրականացնել:

Մանկապարտեզի գերխնդիրն է կոմպետենտ մանկավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց դաստիարակի մասնակցության և աջակցության: Այդ է պատճառը, որ «դաստիարակը պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ»[Հովհաննիսյան2006:24]

Մանկավարժական գիտությունը մեծ ուշադրություն է դարձնում դաստիարակի դերի լիարժեք կայացմանը, որի մեջ մտնում են դաստիարակի մասնագիտական ունակությունները, կարողությունները, հմտություններն ու էթիկան: Դաստիարակը երկու դեր է կատարում աշակերտի կյանքում: Առաջին՝ նրա մարդ ձեւավորելու գործում, եւ երկրորդ՝ նրա կրթության հարցում:

Դաստիարակի հաջողությունը մեծապես պայմանավորված է նրա թե անձնային, թե մասնագիտական որակներով: Նրա դերից եւ աշխատանքի որակից

է կախված, թե վաղն ինչ անհատներ կյանք կմտնեն, եւ ովքեր կձևավորեն մեր հանրությունը՝ որոշելով պետության ապագան: Շատ կարևոր է նաև դաստիարակի մարդ տեսակը, նրա վարքագիծը, քանի որ նա վառ օրինակ է հանդիսանում սանի համար: Օրինակն ավելի բարձր է խոսում, քան՝ խոսքերը: Դրա համար յուրաքանչյուր դաստիարակ պետք է գիտակցի իր դերի նշանակությունը:

Դաստիարակն այսօր նոր մարտահրավերների առջև է կանգնած. կրթական անվերջանալի թվացող բարեփոխումները, ծրագրային փոփոխությունները, ժամանակակից աշակերտի մտածելակերպն ու պահանջները և շատ այլ գործոններ նրան ստիպում են վերանայել իր աշխատանքային զինանոցում եղած գործիքները՝ մեթոդները, աշխատաոճը, գիտելիքները, այլապես ձախողումն անխուսափելի կլինի:

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ

3.1 Հետազոտական աշխատանքի նախապատրաստումը և իրականացումը

Հետազոտական աշխատանքն իրականացվել է «Աբովյան քաղաքի թիվ 9 մանկապարտեզում», որին մասնակցել են թվով 13 դաստիարակ և 22 ծնող Հետազոտական աշխատանքի **նպատակն էր.**

➢ ուսումնասիրել դաստիարակի դերը մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքների համակարգում և սաների ձևավորման գործընթացում:

Հետազոտական նպատակն է եղել ուսումնասիրել.

- դաստիարակի՝ մանկապարտեզի դաստիրակչական աշխատանքների շրջանակներում իրականացավող գործառույթները, դրանց արդյունավետությունը, նպատակահարմարությունը և համագործակցության մակարդակը ծնողների հետ,

Հետազոտական աշխատանքի իրականացնելու համար կազմվել է հարցաթերթիկ՝ նախատեսված ծնողների համար / տե՛ս հարցաթերթիկ 1-ը /, հարցաթերթիկ՝ նախատեսված դաստիարակ համար / տե՛ս հարցաթերթիկ 2-ը / :Հարցաթերթիկներում եղել են հարցեր, որոնք կրկնվել են, որպեսզի կատարվի

դաստիարակների և ծնողների կարծիքների համեմատություն, ինչպես նաև եղել են չկրկնվող հարցեր, որոնք նախատեսված են եղել վիճակագրություն անց կացնելու համար:

Հարցաթերթիկները տեղադրված են ստորև.

Հարցաթերթ 1./Հարցաթերթ ծնողի համար/

1.Համագործակցում եք արդյոք Ձեր երեխայի դաստիարակի հետ.

Այո *Ոչ*

2. Ինչ հաճախականությամբ է կայանում համագործակցությունը.

Մշտապես *Հաճախ* *Երբեմն* *Հազվադեպ* *Երբեք*

3.Ինչպես կգնահատեք դաստիարակների իրազեկվածության աստիճանը Ձեր երեխայի մանկապարտեզից դուրս գործունեության վերաբերյալ.

Բարձր *Միջին* *Ցածր*

4.Ինչ հատկանիշներով պետք է օժտված լինի դաստիարակը /ընտրեք նախընտրելի տարբերակը կամ առաջարկեք Ձեր տարբերակը/.

Բարի *Բանիմաց* *Պարտաճանաչ* *Խելացի* *Հոգատար*

5.Ինչ հաճախականությամբ եք մասնակցում ծնողական հանդիպումներին /ժողովներին/:

ՄիշտՀաճախ *Երբեմն* *Հազվադեպ* *Չեմ մասնակցում*

6.Այլ տեղեկություններ———————————————

5.Ինչ հաճախականությամբ են Ձեր խմբի ծնողները մասնակցում ծնողական հանդիպումներին /ժողովներին/

ՄիշտՀաճախ Երբեմն Հազվադեպ Չեմ մասնակցում

6. Այլ տեղեկություններ——————————————————————————

————————————————————————————————

————————————————————————————————

Շնորհակալություն

Դաստիարակ-ծնող համագործակցության վերլուծություն, ըստ դաստիարակի



Գծապատկեր 2



Ծնողների պատկերացումները դաստիարակի կերպարի և գործառույթների վերաբերյալ.

Ընդհանուր բնութագիրը

1.Դաստիարակի բարեկրթության չափանիշ է հանդիսանում նրբանկատությունը, ի հակադրություն կոպտության, աննրբանկատության:

2.Դաստիարակը պետք է լինի խիստ, բայց բարի և անաչառ:

3. Եթե դաստիարակն ուզում է, որ իրեն հարգեն, առաջին հերթին ինքը պետք է հարգի ուրիշների արժանապատվությունը:

4.Նախքան ուրիշներից ուշադրություն պահանջելը, դաստիարակն ինքը պետք է ուշադիր լինի իրեն շրջապատողների հանդեպ, հասկանա նրանց շահելը, կարիքներն:

Դաստիարակը պետք է ունենա՝

- ✓ ներքին ազատություն,
- ✓ մտածելակերպի, վարքի ազատ ընտրություն,
- ✓ սեփական արարքների հնարավոր հետևանքների համար լիարժեք պատասխանատվության գիտակցում:

Դաստիարակը պետք է կարողանա՝

- ✓ պլանավորել իր մասնագիտական գործունեությունը,
- ✓ վերլուծել և կանխատեսել իր գործունեության արդյունքները,
- ✓ աջակցել յուրաքանչյուր սանի՝ որպես անհատ ձևավորմանը,

Ինչն է ամենակարևորը դաստիարակի համար՝ երեխաների հետ շփման մեջ.

▪ բարությունը (իհարկե բարությունն առանց պահանջկոտության՝ թակարդ է մանկավարժի համար, բայց պարզվում է, որ երեխաների համար այն դաստիարակի ամենակարևոր հատկանիշն է: Գուցե երեխաները հոգնե՞լ են անդադար վերահսկումից և պահանջներից, և նրանց պետք են պարզ մարդկային զգացումներ),

▪ ուշադրությունը,

▪ հոգատարությունը,

▪ կարեկից, արձագանքող վերաբերմունքը,

▪ շփման համար բաց լինելը,

▪ բարեհամբյուր լինելը,

▪ պատասխանատվությունը,

▪ մարդասիրությունը,

▪ անկեղծությունը,

▪ հումորի զգացումը,

▪ լրջությունը,

▪ հավասարակշռվածությունը,

▪ արդարամտությունը,

▪ նպատակասլացությունը,

▪ ժամանակակից լինելը:

Ինչն է ամենակարևորը դաստիարակի համար՝ծնողների հետ շփման մեջ.

▪ Ազնվությունն ու արդարամտությունը

▪ Համբերատար լինելը

▪ Հանգստությունը

▪ Բարեկրթությունը

▪ Նրբանկատությունը

Դաստիարակ լինել՝ նշանակում է.

▪ մեծ պատասխանատվություն կրել,

▪ կարողանալ լսել և հասկանալ,

▪ լինել սրտացավ,

▪ հոգ տանել յուրաքանչյուր սանի հոգեկան, ֆիզիկական և բարոյական վիճակի մասին,

▪ աջակցել ,

▪ ղեկավարել և կարգուկանոն պահպանել,

▪ փոխարինել ծնողների, ավագ ընկերուհուն կամ ընկերոջը (եթե դրա կարիքը կա),

▪ արդարամիտ լինել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականությունը և կատարելով հետազոտական աշխատանք՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին՝

- Դաստիարակի միջոցով են կյանքի կոչվում մանկավարժության նվաճումները: Նա առաջինն է, ով անցյալի և ներկայի հասարակական, պատմական փորձը փոխանցում է նոր սերունդներին: Նրա դերն անգնահատելի է մարդկային հասարակության և առանձին վերցրած յուրաքանչյուր երեխայի անձի զարգացման և ձևավորման գործում:
- Դաստիարակիանձնային որակներն ու մանկավարժական վարպետությունը փոխկապակցվածենևփոխլրացնումենմիմյանց, որի արդյունքում կարելի է առանձնացնել դաստիարակիերեքհիմնականորակ՝ մանկավարժականհատկանիշներ, հոգեբանականառանձնահատկություններ և մասնագիտականկոմպետենցիաներ:
- Դաստիարակների աջակցությամբ սաները ոչ միայն համակարգված հարստացնում ու համալրում են իրենց գիտելիքները, այլև ծանոթանում են ազգային ու համամարդկային բարոյականության արժեքներին, նորմերին և դառնում դրանց կրողը:
- Դաստիարակի բարձր հեղինակությունը դրական ազդեցություն է գործում սանի անձի ներդաշնակ և համակողմանի ձևավորման և զարգացման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս.- Մանկավարժություն, 2005 թ.
2. Ասատրյան Լ. Թ., Հակոբյան Գ. Հ., Ասատրյան Մ. Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն. Զ., Բաղդասարյան Ա. Ա. Մանկավարժություն, Երևան Արտագերս, 2017, 360 էջ
3. Բալայան Ա. Մանկավարժականվարպետությանհիմունքներ: Երևան, 1988թ.
4. Ժամանակակիցմանկավարժականմոտեցումներ. Ս.Վարդումյանիխմբ., Երևան, 2005
5. Հակոբյան Ն., Գևորգյան Ս., և ուրիշներ - ‹‹Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ›› հեղինակային հրատարակություն, Երևան 2010